



## «Երևանի Գինու Օրեր 2026» արշավի մասնակցության պայմաններ

### 1. Ներածություն

1.1. «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Կազմակերպիչ) կողմից թողարկված Visa տեսակի (բացառությամբ՝ Visa Business) քարտերի (այսուհետ՝ Քարտ) քարտապանների (այսուհետ՝ Քարտապան) համար Կազմակերպիչի կողմից իրականացվում է «Երևանի Գինու Օրեր 2026» արշավ (այսուհետ՝ Արշավ):

1.2. Մասնակցելով Արշավին՝ մասնակիցն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները:

1.3. Սույն Պայմաններին և Դրույթներին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

### 2. Ընդհանուր դրույթներ

2.1. Արշավի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը տրամադրվում է [www.acba.am](http://www.acba.am) կայքում:

2.2. Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել սույն Պայմաններում և Դրույթներում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի Արշավի 2.1. կետում նշված հարթակում:

### 3. Մասնակցության պայմաններ

3.1 Ս.թ. մայիսի 1-ից հունիսի 30-ը (ներառյալ) պատվիրված մեկ Visa Digital քարտի սպասարկման միջնորդավճարը սահմանվել է անվճար՝ անկախ քարտի արժույթից:

3.2 Ս.թ. հունիսի 5-ից հունիսի 7-ը (ներառյալ) կայանալիք «Երևանի Գինու Օրեր 2026» միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) բոլոր մասնակից վաճառատարահներում և ժամանցի վայրերում, որոնց POS տերմինալները կսպասարկվեն Բանկի կողմից և տաղավարներում առկա կլինեն Բանկի տեղեկատվական վահանակները (բացառությամբ Միջոցառման տոմսերի վաճառք իրականացնող տաղավարների), Քարտերով վճարային գործարքներ (այսուհետ՝ Գործարք) կատարելու դեպքում Քարտապաններին Կազմակերպիչի կողմից կտրամադրվի կատարված Գործարքի 30%-ի չափով Cashback գումար (առանց հարկերի):

3.2.1 Cashback գումարը չի կարող լինել ավելի քան 5 000 ՀՀ դրամ (առանց հարկերի)՝ յուրաքանչյուր հաճախորդի և Միջոցառման 3 օրերի համար:

3.2.2 Որպես Գործարք համարվելու են ս.թ. հունիսի 5-ին ժամը 16:00-ից մինչև ս.թ. հունիսի 7-ը ժամը 22:30-ը կատարված Գործարքները:

3.2.3 Cashback գումարը կվճարվի Քարտապանի գործող Քարտի քարտային հաշվին մինչև ս.թ. հուլիսի 15-ը:

3.2.4 Մինչև Արշավի ամփոփումը Արշավի շրջանակում կատարված Գործարքների հետվճարներ լինելու պարագայում Գործարքի համար Cashback գումար չի հաշվարկվի:



3.3 Ս.թ. հունիսի 5-ից հունիսի 7-ը (ներառյալ) կայանալիք Միջոցառման առաջին 500 մասնակիցներին, ովքեր նշված ժամանակահատվածում կպատվիրեն Visa Digital քարտեր, կտրամադրվեն բրենդավորված նվերներ (այսուհետ՝ Նվեր):

3.3.1 Նվերը ստանալու համար անհրաժեշտ է Visa Digital քարտը պատվիրելուց հետո մոտենալ Միջոցառման Կազմակերպչի տաղավար և ստանալ Նվերը:

3.3.2 Նվերը հնարավոր է ստանալ միայն սույն Պայմանների 3.3 կետում նշված ժամկետում և 3.3.1 կետում նշված հասցեում:

3.3.3 Արշավի շրջանակում յուրաքանչյուր հաճախորդին կտրամադրվի սույն Պայմաններով սահմանված առավելագույնը մեկ Նվեր, որը ենթակա չէ փոխարինման կամ փոխանակման գումարի հետ:

3.3.4 Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում տրամադրված Նվերի որակի համար:

3.5. Բանկի կողմից զեղծարար և/կամ առերևույթ կեղծ և/կամ հաճախորդի գործարար բնութագրին չհամապատասխանող և/կամ տնտեսական նպատակը չհիմնավորվող գործարքների վերաբերյալ հիմնավոր կասկած ունենալու պարագայում Քարտապանի մասնակցությունը կարող է անվավեր ճանաչվել: Վերոնշյալ չափանիշները սահմանվում և որոշվում են Կազմակերպչի կողմից:

3.6 Բանկի, «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԿ ՓԲԸ, «ԱԿԲԱ-ԱՄՈՒՆԴԻ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ ԵՎ «ԱԿԲԱ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՓԲԸ աշխատակիցները չեն կարող հանդիսանալ սույն Պայմանների 3.2 և 3.3 կետերի մասնակից:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել [www.acba.am](http://www.acba.am) կայք կամ զանգահարել 010-31-88-88 հեռախոսահամարով:

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: